Հիւսէին Շահի մօտ. իսկ նրա գործակից Մինաս վարդապետը մնաց Ռուսաստանում՝ հայ մելիքների անունից բանակցութիւնները շարունակելու համար:

Պետրոս Մեծի այդ ձեռնարկութիւնը աւելի խանդավառեց հայերին: Ամէնքը արդէն հաւատում էին մօտալուտ ազատութեան:

Վերադառնալով Ռուսաստան, Օրին միանդամայն նպաստաւոր զեկուցում տուեց տիրող պայմանների մասին — Պարսկաստանը քայքայուած, կռուի անընդունակ, իսկ հայերն ու վրացիները պատրաստ ապստամբութեան դրօշակ պարզելու: Միայն Շամախում եւ շրջակայքում 17,000 զինուած հայեր, կազմ ու պատրաստ, սպասում են ցարի հրամանին:

Պետրոս Մեծը ոգեւորուած — ըստ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի Եկատերինա կայսրուհուն ներկայացրած 1790 թ. Յունուար 23 յուշագրի1) — խոստանում է 40,000 զօրք դնել Օրիի տրամադրութեան տակ՝ Հայաստանի ազատութեան համար եւ Շահի ուղարկած 200,000 ռուբլու նուէրներն էլ պատերազմական ծախսերին յատկացնել: Սակայն Օրին համեստօրէն հրաժարւում է այդ մեծ պատուից, որպէս «աղնիւ մարդ»:

Այդ դէպքում Պետրոսը խոստանում է անձամբ զօրքի գլուխն անցնել եւ արշաւել Հայաստան:

Լուրը Օրին շտապով հաղորդեց հայ մելիքներին: Խանդավառութիւնը անկարագրելի է: Հայրենիքի ազատութիւնը այլեւս երազ չէ, այլ շուտով իրականացող մի փաստ:

Եւ սկսւում են տենդագին պատրաստութիւնները: Զինւում եւ կազմակերպւում է հայ զօրքը, մանաւանդ Ղարաբաղի ու Սիւնեաց լեռներում, անհամբեր սպասելով ռուս բանակի մօտենալուն:

Այդ ժամանակներում տեղի ունեցաւ աֆղանների ապստամբութիւնը, որի հետեւանքը եղաւ Շահ Հիւսէինի գահընկեցութիւնը եւ Կովկասեան Լեռնականների արշաւանքները դէպի պարսկական երկիրները, մինչեւ Հայաստան: Պարսկաստանը նոր ալեկոծութեան մէջ էր եւ ուրեմն պայմանները միանդամայն նպաստաւոր էին ռուսական զօրքերի յառաջխաղացութեան համար:

Ու Պետրոս Մեծը, բանակի գլուխն անցած, մօտեցաւ Կասպից ծովափին: Հայ մելիքները, վրաց Վախթանկ թագաւորի հետ միաբանած, 40,000 զօրքով դնացին նրան դիմաւորելու Կուր գետի ափերի վրայ:

Ծագում էր ազատութեան արշալոյսը երկու բախտակից ժողովուրդների համար:

Բայց դժբախտաբար, Դերբենդը, Բագուն եւ Գիլանը գրաւելուց յետոյ՝ Պետրոսը անըսպասելիօրէն յետ դարձաւ դէպի իր մայրաքաղաքը, հայերին թողնելով թշնամիների կատաղութեան զոհ:

Առաջինը յարձակուեցին օսմանցիք պարսկական հողերի վրայ՝ վրէժխնդիր ռուսական միջամտութեան համար արեւելեան գործերում: Նրանց շուտով միացան նաեւ պարսիկները: Բայց կարծես այդ դեռ քիչ էր, Կովկասեան Լեռնականներն էլ երրորդ կողմից, Վրաստանն ասպատակելով, հասան մինչեւ Հայաստան — աւերելով, այրելով, կոտորելով եւ դերի վարելով: Սկսուեց մի իսկական դժոխք հայութեան համար:

Այսպէս, ամէն կողմից թշնամիներով շրջապատուած՝ հայ մելիքներն ու իշխանները մի կողմից՝ քաջութեամբ կռւում էին իրենց բազմաթիւ թշնամիների դէմ, իսկ միւս կողմից էլ անդադար օգնութիւն էին հարցում Ռուսաստանից: Հակառակ դէպքում նրանք խնդրում էին գոնէ Պետրոս Մեծի թոյլտուութիւնը Կասպիականի նորանուաճ ափերը գաղթելու համար:

Եւ Պետրոսը սիրով ընդունեց հայ մելիքների այդ վերջին առաջարկը, միեւնոյն ժամանակ հարկաւոր կարգադրութիւնն անելով Դերբենդի կոմենդանտ գեն. Կրոպոտովին:

Մինչեւ հայ երեւելիները պատրաստւում էին իրենց տնով-տեղով ու մարդկանցով դէպի ռուսական հողը գաղթելու, յանկարծ լսեցին Պետրոս Մեծի մահը (1725) եւ այդպիսով նրանց մտադրութիւնը մնաց անկատար:

Այժմ նրանք ստիպուած էին մնալ իրենց հայրենիքում եւ անհաւասար կռիւը շարունա-

1) Հաւաքածոյ հայ ժողովուրդի պատմութեան վերաբերեալ փաստաթղթերի, Բ. եր. 54, Մոսկուա, 1838.